ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա ՝ Նատյուրմորտ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Մարինա Թադևոսյան Ա.Խանջյանի հ.53 հիմնական դպրոց

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԴԱՍԸԹՆԱՑԱՎԱՐ՝ Լիլիթ Իսկոյան մանկ. Գիտ. թեկ.,դոցենտ

ԵՐԵՎԱՆ 2022

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր հետազոտական աշխատանքի թեման է Նատյուրմորտը։

Նատյուրմորտի մոտիվները՝ որպես մանրամասներ, գոյություն են ունեցել դեռևս հին արևելյան, անտիկ, միջնադարյան, հին Չինական և Ճապոնական արվեստներում։ Նատյուրմորտը՝ որպես ինքնուրույն ժանր, սկզբնավորվել է նոր ժամանակի եվրոպական արվեստի կազմավորմանը զուգընթաց՝ հաստոցային նկարչության առանձնացումով և ժանրերի ճյուղավորված համակարգի առաջացումով։

Արդեն Վերածննդի շրջանի իտալական և նիդեռլանդական վարպետների աշխատանքներում մեծ ուշադրություն է դարձվել նյութական աշխարհի իրերի կոնկրետ զգայական գեղեցկություններին։

Նատյուրմորտը, և ընդհանրապես արվեստը, անփոփոխ, հավերժական արժեք ու անհրաժեշտություն է մարդու գեղագիտական ճաշակի, մտածելակերպի զարգացման համար։ Արվեստի մարդիկ, իրենց հույզերը, զգացմունքները արտահայտելով թղթի վրա, ծնունդ են տվել այս կամ այն գլուխգործոցին, որը ժամանակի ընթացքում մարդկանց համար դարձել է արվեստի մի նմուշ։ Ժամանակի ընթացքում դրանք չեն մոռացվել, արվեստից դուրս չեն եկել։ Գուցե նկարչության ինչ-որ տեսակ ժամանակի ընթացքում կրել է որոշակի փոփոխություններ, բայց հինը միշտ մնացել է՝ հարմարվելով արդի պայմաններին և պահանջներին, նմանապես ևս նատյուրմորտը, գուցե որոշակի փոփոխությամբ, բայց բոլոր ժամանակներում էլ եղել է արդիական։ Արդիականությունը մեր հետազոտական աշխատանքի կարևոր առանձնահատկությունն է։

Հետազոտական աշխատանքը կատարելիս մեր առջև դրել ենք հետևյալ նպատակները՝

- սովորողներին ուսուցանել գեղանկարչության տեսակների մասին գիտելիքներ,
- սովորեցնել նատյուրմորտի, թե՛ հուզական, թե արտաքին առանձնահատկությունները,

- սովորեցնել նատյուրմորտ նկարելու նրբությունները ու պահանջները,

Նպատակից բխում են հետևյալ խնդիրները՝

- ինչպես հասկանալի ներկայացնել, թե ինչ է նատյուրմորտը,
- ինչ մեթոդներով վարժեցնել երեխաների ձեռքը նատյուրմորտ նկարելուն,
- ինչպես տարբերել նատյուրմորտը գեղանկարչության մյուս տեսակներից։

Մեր հետազոտական աշխատանքը կազմված է ներածությունից, բուն մասից, եզրակացությունից, գրականության ցանկից և բովանդակությունից։

Նատյուրմորտ

Նկարչությունն ունի 9 ժանր: Դրանք են՝ դիմանկար, բնանկար, անիմալիստական ժանր, դիցաբանական ժանր, պատմական ժանր, կրոնական ժանր, կենցաղային ժանր, ծովանկար և նատյուրմորտ:

Այն ժանրը, որտեղ պատկերվում է անշարժ, անշունչ առարկաներ, սովորաբար տնային կահույք, ձկներ, խփված վայրի թռչուններ, որևէ մասնագիտության պիտույքներ, մրգեր կամ էլ ծաղիկներ, կոչվում է նատյուրմորտ:

Նատյուրմորտ Պոմպեյի ֆրեսկոյից 63-79 թ.

Նատյուրմորտը տարբեր երկրներում

Նատյուրմորտի պատմությունը՝ որպես հաստոցային գեղանկարչության ժանր, սկզբնավորել է իտալացի գեղանկարիչ Յակոպո դե Բարբարիի «Նատյուրմորտ» աշխատանքով (1504 թ.)։

Յակոպո դե Բարբարի Նատյուրմորտ 1504 թ.

Սակայն նատյուրմորտի ժանրը մեծ տարածում է գտել միա՛յն 16-րդ դարի երկրորդ կեսից և 17-րդ դարի սկզբից նիդեռլանդացի Պիտեր Արտսենի և նրա հետևորդների նկարներում։ Այդ շրջանի նատյուրմորտներում մեծ տեղ է հատկացված ուտեստներով, կահ-կարասիով ծանրաբեռնված խոհանոցների և կրպակների տեսարաններին։

Պիտեր Արտսեն

Նատյուրմորտը ծաղկում է ապրում հիմնականում Իտալիայում, նրա կազմավորմանը մեծապես նպաստել է Կարավաջիոյի նորարական բարեփոխումները, որոնք նկարիչների ուշադրությունը սևեռել են հասարակ «ցածր» մոտիվների վրա։ Իտալական նատյուրմորտը աչքի է ընկնում հորինվածքի բազմազանությամբ, վառ և հագեցած գույներով։

Կարավաջիո «Մրգեր մաքրող տղա»

Կառավաջիոյի ազդեցությունը նկատելի է նաև իսպանական նատյուրմորտներում, սակայն դրանք առանձնանում են վսեմ խստությամբ և նշանակալիությամբ։ Հոլանդական նատյուրմորտը զարգացել է 17-րդ դարում՝ միավորելով նախաճաշ, անուշեղեն, ձկներ, ծաղիկներ և մրգեր, խփված որս, այլաբանական՝ ունայնություն ունայնության (vanitas) նատյուրմորտի տիպերը։

Վիլլեմ Կլաս Գավաթով նատյուրմորտ

Ֆլամանդական նատյուրմորտը պատկերում է շուկաներ, կրպակներ, ծաղիկներ և մրգեր։ Աչքի է ընկնում հորինվածքի հզոր թափով, պտղաբերության. առատության հզոր գովերգ են հանդիսանում։

Նատյուրմորտը 17-րդ դարից զարգանում է Ֆրանսիայում և Գերմանիայում։ Հենց Ֆրանսիայում էլ առաջացել է նատյուրմորտ - մեռած բնություն տերմինը՝ արժանանալով ակադեմիստների արհամարհական վերաբերմունքին, որոնք ընդունում էին միայն կենդանի բնությունը;

Պոլ Սեզան Խնձորով նատյուրմորտ

XVII դարի վերջին ֆրանսիական նատյուրմորտներում գերիշխել են պալատական արվեստի դեկորատիվ մոտիվները: XVIII դարում այդ ժանրի ամենաակնառու ներկայացուցիչը Ժան-Բատիստ Սիմեոն Շարդենն է: XIX դարում նատյուրմորտի զարգացման ընթացքը նախանշել են տարբեր ժանրերով ստեղծագործող գեղանկարիչներ, իսկ վերելքը պայմանավորել են ուշ իմպրեսիոնիզմի վարպետները: Դարավերջին Վինսենտ վան Գոգն իր գործերով ընդարձակել է նատյուրմորտի սահմանները:

Վինսենտ վան Գոգ

Ժանրի զարգացմանը նպաստել են նաև XX դարի նկարիչները՝ Պաբլո Պիկասսոն (Ֆրանսիա), Ջորջո Մորանդին (Իտալիա), Դավիդ Սիկեյրոսը (Մեքսիկա), Կուզմա Պետրով-Վոդկինը (Ռուսաստան) և ուրիշներ:



Պաբլո Պիկասոյի «Կակաչներով նատյուրմորտը»

Նատյուրմորտը Հայաստանում

Հայկական կերպարվեստում նատյուրմորտի մոտիվներն արտացոլվել են միջնադարյան մանրանկարչության մեջ: Առաջին նատյուրմորտների հեղինակը նկարիչ Մինասն է (XVII դար): Նատյուրմորտը՝ որպես ժանր, Հայաստանում վերջնականապես ձևավորվել է XIX դարի վերջին, որի նշանավոր ներկայացուցիչը Զաքար Զաքարյանն է: XX դարում նատյուրմորտներ են ստեղծել Վարդգես Սուրենյանցը, Հմայակ Հակոբյանը, Եղիշե Թադևոսյանը և ուրիշներ: Հայ նոր գեղանկարչության մեջ ազգային նատյուրմորտը սկզբնավորվել է Մարտիրոս Սարյանի գործերով:

1920-ական թվականներին Թիֆլիսում ստեղծագործող Լևոն Ասլամազյանի, Երվանդ Քոչարի, Գևորգ Գրիգորյանի (Ջիոտտո), Հովսեփ Կարալյանի և Հակոբջան Ղարիբջանյանի ինքնատիպ նատյուրմորտներում համադրված են դասական ու ազգային արվեստները: 1920–30-ական թվականներին Մարտիրոս Սարյանի, Հակոբ Կոջոյանի, Վրթանես Ախիկյանի, Վահրամ Գայֆեջյանի, Լևոն Թութունջյանի և ուրիշների ստեղծագործությունները հարստացրել ու առավել բազմազան են դարձրել ժանրը: 1940-ական թվականներից ուշագրավ նատյուրմորտներ են ստեղծել Միեր Աբեղյանը, Էդվարդ Իսաբեկյանը, Հովհաննես Զարդարյանը, Մարիամ և Երանուհի Ասլամազյանները, Արարատ Ղարիբյանը և ուրիշներ:



Մարտիրոս Սարյան. «Կալակիի ծաղիկները» (1914 թ.)

1950–70-ական թվականներին Հարություն Կալենցը, Գրիգոր Խանջյանը, Մինաս Ավետիսյանը, Լավինիա Բաժբեուկ-Մելիքյանը, Հակոբ Հակոբյանը, Վարոս Շահմուրադյանը, Ռուբեն Ադալյանը, Վաղինակ Սարգսյանը և ուրիշներ իրենց նատյուրմորտներում արծարծել են դեկորատիվ, հոգեբանական, կառուցվածքային և այլ խնդիրներ: Նատյուրմորտի նշանավոր վարպետներ են նաև սփյուռքահայ Հովսեփ Փուշմանը, Գրիգոր Շլդյանը, Շարթը (Սարգիս Հարությունյան), Տիրիթը (Հարություն Տիրիթյան) և ուրիշներ: Ժամանակակից հայ գեղանկարիչներից նատյուրմորտներ են ստեղծում Հրանտ Մնացականյանը, Գագիկ Շահինյանը, Զարուհի Մանուկյանը, Վահրամ Հակոբյանը, Նինա Կարապետյանը, Սուրեն Համբարձումյանը և ուրիշներ:

Հակոբ Հակոբյան «Սխտորներ»



Հակոբ Կոջոյան «Կակաչներ»

Ժողովրդական ասացվածքներ

1. Ջուրն իր . . . կգտնի։

- ուղին
- ճամփեն
- հունը։

2. Ձեռքը ձեռք է լվանում, երկու ձեռքը՝ . . . :

- երես
- ձեռք
- այտ։

3. Նույն ծաղկից մեղուն մեղր է շինում, . . . ՝ թույն։

- կարիճը
- օձը
- սարդը։

Դասի պլան

Դասարանը՝ Երրորդ

Առարկան՝ Կերպարվեստ

Դասի թեման՝ Նատյուրմորտ

Դասի տեսակը՝ Նոր նյութի հաղորդման դաս

Դասի նպատակները՝ Ակադեմիական՝

- Գիտելիքներ հաղորդել գեղանկարչության և նրա տեսակների ուսուցման ընթացքի մասին, խթանել նոր գիտելիքների ձեռքբերումը։
- Սովորեցնել, թե ինչպես կողմնորոշվել՝ որ նկարներն են համարվում նատյուրմորդ։
- Գիտելիքներ հաղորդել նատյուրմորդ նկարելու նրբությունների և պահանջների վերաբերյալ։
- Սովորեցնել թևավոր արտահայտություններ բնության, աշխատանքի մասին՝ դրանք խոսքում կիրառելու, ակտիվ բառապաշարը և պատկերավոր խոսք կառուցելու կարողությունը զարգացնելու նպատակով։

Սոցիալական՝

- Ձևավորել նկարչական աշխատանքներ կատարելու կարողություն
- Ձևավորել հետաքրքրություն աշխատանքի, դասի, նոր գիտելիքներ ձեռքբերելու նկատմամբ։
- Նպաստել կրտսեր դպրոցականների ինքնուրույնության և ստեղծագործական ակտիվության զարգացմանը։
- Ձևավորել նոր կարողություններ և հմտություններ։

Արժեքային՝

- Արվեստի ստեղծագործության դերի արժևորում։
- Գեղագիտական և աշխատանքային դաստիարակություն։
- Զարգացած և ստեղծագործող անձի ձևավորում։

- Սեփական հմտությունները ու կարողությունները ըստ անհրաժեշտության օգտագործելու կարողությունների ձևավորում։

Դասի խնդիրները՝

Կրթական՝ Սովորեցնել

- Ճիշտ տեղադրել թղթի մեջ կոմպոզիցիան։
- Ճիշտ աշխատել նկարչական տեխնիկայով։
- Ճիշտ խառնել գույները ցանկալի լրացուցիչ երանգ ստանալու համար։
- Խնամքով կատարել նկարչական աշխատանքները։
- Պահպանել աշխատանքային անվտանգության կանոնները։
- Պահպանել սանիտարահիգիենիկ կանոնները,
- Սովորի տարբերակել նկարի գլխավոր և երկրորդական պատկերները։

Զարգացնող՝ Ձևավորել

- Հետաքրքրություն ուսուցանվող նյութի հանդեպ։
- Համբերատարություն հանձնարարությունը կատարելիս։
- Սկսած գործը մինչև վերջ հասցնելու կարողություն։
- Աշխատանքը սիրով և հաճույքով կատարելու կարողություն։
- Աշխատանքի դերի արժևորում կյանքի ցանկացած հատվածում։

Զարգացնել՝

- Պատկերացումները, երևակայությունը, աշխատասիրությունը,
- Դիտողականությունը, ուշադրությունը, մոտորիկան,
- Գործնական կարողությունները,
- Համգործակցային կարողություններն ու հմտությունները,
- Գեղեցիկը տեսնելու, զգալու, գնահատելու կարողություններ։
- Գեղագիտական և գեղարվեստական ընկալունակությունները։

Դաստիարակչական՝ Դաստիարակել

- Սեր արվեստի ստեղծագործության հանդեպ։
- Աշխատասիրություն, ուշադրություն հանձնարարությունների նկատմամբ։

- Աշխատանքի արդյունքի նկատմամբ խնամքով վերաբերմունքն, աշխատանքը մինչև վերջ կատարելու հատկություն։
- Համագործակցային կարողություններ։
- Հարգանք դիմացինի աշխատանքի նկատմամբ։

Դասի կահավորումը՝

ՈՒսուցչի համար

1. Նյութեր

2. Գործիքներ

Դիտողական պարագաներ՝

- Ցուցադրել նատյուրմորտ նկարներ,
- Լսել բնությանը վերաբերող երաժշտություն։

Աշակերտի համար

1. Նյութեր՝ գուաշ, թուղթ, երանգային թղթեր, մատիտ, վրձին։

Մեթոդներ՝ Մտագրոհ, զրույց, խմբային, Տ-ձև, Քառաբաժան

Հիմնական հասկացություններ՝ Նատյուրմորտ, բնություն, կոմպոզիցիա

Խթանում՝

ՈՒսուցիչ- Երեխանե'ր, այսօր մենք ճամփորդելու ենք մեր շրջակա աշխարհով, ծանոթանալու ենք մեզ շրջապատող բնությանը ։ Երեխաներ-Չափազանց հետաքրքիր է՝ ինչ ենք տեսնելու ու սովորելու։ ՈՒսուցիչ- Երեխանե'ր, ճիշտ է մենք սովորեցինք, որ նատյուրմորտը անկենդան բնություն է կոչվում, բայց այնուամենայնիվ այն ևս բնության մի մասնիկի պատկերումն է։ Բազմաթիվ նկարիչներ իրենց կտավներում պատկերել են այն բնությունը, որն իրենց ավելի հոգեհարազատ է, գրողները պատկերել են աշխատանքը, արարումը, ծնունդը (թեկուզև մի փոքրիկ ստեղծագործության) իրենց ստեղծագործություններում, իսկ ժողովուրդը հնարել է հանելուկներ, ավանդազրույցներ։

- Ասել լրացուցիչ տեղեկություններ նատյուրմորտի մասին
- Սովորեցնել թևավոր արտահայտություններ, հարցնել ասացվածքներ աշխատնքի մասին՝ դրանք խոսքում կիրառելու, ակտիվ բառապաշարը և պատկերավոր խոսք կառուցելու կարողությունը զարգացնելու նպատակով: Երգել և պարել կամ մնջախաղ երաժշտության տակ:

Իմաստավորում՝

- Քայլ առ քայլ բացատրելով ցուցադրել,
- Յուրաքանչյուր խմբի բաժանել իր կամ ամբողջ դասարանին հանձնարարել նկարել,

ՈՒսուցիչ- Այսօր, երեխանե'ր, մենք սովորեցինք, թե ինչ է նատյուրմորտը: Սեփական մտահղացմամբ կնկարենք ինչ որ նատյուրմորտ:

- Դուք արդեն գիտեք նատյուրմորտ նկարելու նրբություններն ու պահանջները:
- Տալ աշխատանքի մեկնարկը:
- Համապատասխանաբար խմբերին լրացուցիչ հանձնարարություններ տալ՝
  1. 1-ին խումբ՝ հորինել անվանակապ/ եթե խմբային աշխատանք է/
  2. 2-րդ խումբ՝ հորինել հանելուկ
  3. 3-րդ խումբ՝ հորինել բանաստեղծություն

Միացնել «սպիտակ աղմուկ» երաժշտություն, որի մեղմ հնչյունների տակ ավելի հաճելի է աշխատելն ու ստեղծագործելը:

Աշխատանքներն ավարտելուց հետո կատարել ցուցադրում, լրացուցիչ հանձնարարությունների ներկայացում:

Գնահատումը կատարել աշակերտների միջոցով՝ ելնելով նախապես դասարանի կողմից մշակված կանոններից:

Կշռադատում՝

Լրացնել քառաբաժանը:

Տանը հանձնարարել հորինել հեղինակային նատյուրմորտ:

Գործնական աշխատանք



Թեստ

1. Որո՞նք են համարվում հիմնական գույներ՝
   - ❖ կարմիր, կապույտ, կանաչ,
   - ❖ կարմիր, կապույտ, դեղին,
   - ❖ կանաչ, կապույտ, սպիտակ։

2. Ի՞նչ է նշանակում նատյուրմորտ
   - ❖ գեղեցիկ բնություն,
   - ❖ անկենդան բնություն,
   - ❖ առարկայական պատկերներ։

3. Որպես ժանր՝ ո՞ր դարում է Հայաստանում ձևավորվել նատյուրմորտը.
   - ❖ 18-րդ դարում,
   - ❖ 19-րդ դարում,
   - ❖ 20-րդ դարում։

4. Ո՞ր լեզվից է փոխ առված նատյուրմորտ տերմինը
   - ❖ իտալերեն,
   - ❖ ֆրանսերեն,
   - ❖ իսպաներեն։

5. Հայկական կերպարվեստում, ո՞վ է առաջին նատյուրմորտի հեղինակը
   - ❖ Եղիշե Թադևոսյան,
   - ❖ Մինաս,
   - ❖ Զաքար Զաքարյան։

Եզրակացություն

Երբ նոր սկսում ես ուսումնասիրել նատյուրմորտ թեման, թվում է՝ իմանալու այնքան քիչ բան կա, այդ թեմայում հետաքրքիր շատ բան չես գտնի աշակերտներին ներկայացնելու համար, դժվար կլինի այդ թեմայով շարժել աշակերտի հետաքրքրությունը, բայց երբ խորանում ես ուսումնասիրության, հետազոտական աշխատանքի մեջ, պատկերն ամբողջությամբ այլ է։ Հետազոտական աշխատանքը համադրելով դասի հետ՝ շատ հետաքրքիր, նոր տեղեկություններով լի արդյունք ունեցանք։ Ամբողջ աշխատանքի ավարտից հետո եկանք այն եզրահանգմանը, որ պետք է տեսական և գործնական կողմերը միասնական օգտագործվեն դասի ընթացքում, որ երեխան ցանկություն ունենա հետաքրքրվելու վերոնշյալ թեմայով։ Աշակերտների համար հաճելի էր նոր նյութի ուսումնասիրումը և ընկալումը, նաև սեփական ուժերով նոր տեղեկություններ հավաքելը նատյուրմորտի վերաբերյալ։ Հեշտությամբ յուրացվեց նրանց կողմից գեղանկարչության տեսակների մասին տրամադրված նոր դասը։ Մի փոքր դժվար էր նատյուրմորտ նկարելու նրբություններն ու պահանջները յուրացնելը։ Սակայն մատչելի բացատրությունից հետո պարզ դարձավ, որ անհնարին ոչինչ չկա։ Աշակերտները նույնիսկ հաճույք էին ստանում իրենց աշխատանքներից։ Իսկ թե ինչպես պետք է նատյուրմորտը տարբերել գեղանկարչության մյուս տեսակներից, հատուկ բացատրության կարիք գրեթե չզգացվեց; Դասի և հետազոտական աշխատանքի համադրությունը տվեց շատ լավ, հաճելի արդյունք, աշակերտների կողմից գեղեցիկ հեղինակային նատյուրմորտներ։

Գրականության ցանկ

1. https://hy.wikipedia.org/
2. https://www.encyclopedia.am/
3. «Կերպարվեստի դասավանդման առանձնահատկությունները» Մ. Պետրոսյան, Երևան, Մանմար 2011

Բովանդակություն

1. Ներածություն 2
2. Նատյուրմորտ. 4
3. Նատյուրմորտը տարբեր երկներում. 5
4. Նայտուրմորտը Հայաստանում 10
5. Ժողովրդական ասացվածքներ. 12
6. Դասի պլան. 13
7. Գործնական աշխատանք 17
8. Թեստ. 19
9. Եզրակացություն. 20
10. Գրականության ցանկ 21